## ԲԱՌԱՐԱՆ

**Հռետորիկա** – հուն. orare – խոսել, միտքը շարադրել և rhetorike (ῥητορική) – տպավորիչ, ճարտար խոսելու, ելույթ ունենալու արվեստ: Հայերենում առավել կիրառական տարբերակը՝ ***ճարտասանություն***:

**Լոգոգրաֆ** – հունարեն λόγος (logos) – բառ, միտք և γράφω (grapho) – գրել: Հին Հունաստանում այդպես էին անվանում այն մարդկանց, ովքեր պաշտպանական կամ մեղադրական ճառեր էին գրում դատական գործընթացի մասնակիցների համար:

**Մաևտիկա** – հունարենից թարգմանաբար՝ մանկաբարձուհու արվեստ: Էվրիստիկ զրույց վարելու՝ Սոկրատեսի կողմից մշակված մեթոդ, արվեստ, որի ընթացքում դիպուկ հարցերի ու դիտարկումների շնորհիվ նա հասնում էր այն բանին, որ զրուցակիցը բախվում էր սեփական դատողություններում թույլ տված սխալների հետ և, «անհանգստություն» զգալով, ձեռնամուխ լինում նոր որոնումների, նոր գիտելիքի հայտնաբերմանը:

**Փաստարկում** – կշռադատության այնպիսի եղանակ, որի ընթացքում առաջադրվում է որևիցե դրույթ՝ որպես ապացուցման թեզիս, քննարկվում են դրա ճշմարտացիության օգտին բերված փաստարկներն ու հնարավոր հակափաստարկները, արժեքավորվում են ինչպես ապացուցման, այնպես էլ հերքման թեզիսն ու հիմքերը: Հերքվում է հակաթեզիսը, ապացուցվում է թեզիսը: Համոզմունք է ձևավորվում թեզիսի ճշմարիտ և հակաթեզիսի սխալ լինելու վերաբերյալ, հիմնավորվում է թեզիսի ընդունման նպատակահարմա-

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 15 րոպե**

րությունը: Փաստարկողը ձգտում է ընդդիմախոսներին և ունկնդիրներին դարձնել իր համախոհը և փաստարկման թեզիսից բխող համապատասխան գործողությունների մասնակիցը:

**Մտահանգում** – մտքի ձև, որտեղ մեկ կամ մի քանի դատողություններից (նախադրյալներից) որոշակի տրամաբանական նորմերի համաձայն բխեցվում է մի նոր դատողություն (եզրակացություն):

**Կշռադատություն** – տրամաբանորեն կապակցված մտահանգումների շղթա:

**Փաստարկ** – դրույթի ճշմարտացիության ապացուցման կամ դրա հիմնավորման նպատակով առաջադրվող դատողություն: Դրույթի հերքման նպատակով առաջադրվող դատողությունները կոչվում են *հակափաստարկներ*:

**Սոփեստ** – հուն. σοφιστής (sophistes) – իմաստուն: Մ.թ.ա. 6-5-րդ դարերի համանուն փիլիսոփայական ուղղության ներկայացուցիչներ, որոնք դրամի դիմաց ճարտասանության դասեր էին տալիս քաղաքական ու հասարակական գործիչներին: Հետագայում բառի իմաստը փոխակերպվեց, և *սոփեստ* ասելով սկսեցին հասկանալ *իմաստակ*, շահադիտական նկատառումներով առաջնորդվող թվացյալ իմաստուն:

**Կոմպոզիցիա (դատական ճառի)** – լատ. comositio - կազմում, կապակցում կառուցարկում: Ճառի կառուցվածք, տարբեր հատվածների կապակցման ձև:

**Դիալեկտիկա** – հուն.՝ երկխոսություն, բանավեճ վարելու արվեստ: Արիստոտելի մեկնաբանությամբ՝ կառուցողական բնույթ ունեցող երկխոսություն, որի նպատակը

խնդրի լուծման համատեղ որոնումն է, նոր գիտելիքի ու ճշմարտության հայտնաբերումը:

**Էրիստիկա** – երկխոսության և բանավեճի այնպիսի կրքոտ եղանակ, որի նպատակը հաղթելն է ամեն գնով, նաև՝ անազնիվ միջոցների գործադրմամբ:

**Սոփեստություն** – ըստ Արիստոտելի՝ հաղորդակցման (երկխոսության, բանավեճի) այնպիսի եղանակ, որի նպատակը իմաստունի տպավորություն թողնելն ու համբավ ձեռքբերելն է:

## ԲԱՌԱՐԱՆ

**Ավանդական-ձևական տրամաբանություն** – գիտություն, որն ուսումնասիրում է մտածողությունը՝ կառուցվածքի ու ձևերի (հասկացություն, դատողություն, մտահանգում) տեսանկյունից և դրանց կանոնավոր շաղկապման օրենքները:

**Մտածողության կանոնավորություն** – նույնն է՝ ճշտություն: Մտածողության այն եղանակն է, մտքերի շաղկապման այն ձևը, որը թույլ է տալիս ճշմարիտ նախադրյալներից ստանալ ճշմարիտ եզրակացություն:

**Էրուդիցիա** – (լատ. eruditio - կրթություն, գիտակցություն) խորը և բազմակողմանի գիտելիքներով օժտվածություն:

**Համանմանություն** (անալոգիա) – մտահանգման տեսակ, որտեղ երկու առարկաների միջև մի շարք հատկությունների նմանության հիման վրա ենթադրում են, որ դրանք կարող են նման լինել նաև այլ հատկություններով: Այս մեթոդը կարող է ընկած լինել տարատեսակ վարկածների ու աշխատանքային ենթադրությունների հիմքում, սակայն չունի ապացուցողական ուժ և իբրև ապացույց ներկայացնելը կարող է հանգեցնել էական սխալների:

**Համատեքստ** – կշռադատությունների այն համակարգն է, որի շրջանակներում գործածվում է տվյալ դրույթը (միտքը կամ արտահայտությունը), և որի վերլուծությունը թույլ է տալիս հստակեցնել ու ճշգրտել դրույթի իմաստն ու նշանակությունը:

**Հակասող դատողություններ** – Ա) Այնպիսի դատողություններ, որոնցից մեկում որևէ բան հաստատվում (ժխտվում) է մտքի առար-

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 20 րոպե**

կայի նկատմամբ, իսկ մյուսում այդ նույնը ժխտվում (հաստատվում) է: (Օրինակ՝ «Քաղաքացի Պ-ն հանցագործ է» և «Քաղաքացի Պ-ն հանցագործ չէ»): Բ) Երկու այնպիսի դատողություններ, որոնից մեկը որևէ բան հաստատում է (ժխտում է) տվյալ դասի նկատմամբ, իսկ մյուսը այդ նույն հատկությունը ժխտում է (հաստատում է) տվյալ դասի մի մասի նկատմամբ: (Օրինակ՝ «Բոլոր իրավաբանները դատախազներ են» և «Կան իրավաբաններ, ովքեր դատախազներ չեն»):

**Հակադեմ դատողություններ** – երկու այնպիսի դատողություններ, որոնցից մեկը առարկաների տվյալ դասի նկատմամբ հաստատում է (ժխտում է) որևէ հատկություն, իսկ մյուսը տվյալ դասի նկատմամբ ժխտում է (հաստատում է) այդ նույն հատկությունը: (Օրինակ՝ «Բոլոր իրավաբանները դատախազներ են» և «Ոչ մի իրավաբան դատախազ չէ»):

**Ապացուցել** – ցույց տալ տվյալ դրույթի ճշմարտացիությունը, այսինքն՝ համապատասխանությունը իրականությանը:

**Ճշմարտություն** – տվյալ ձեռնարկում ճշմարտությունը մեկնաբանվում է որպես մտքի համապատասխանություն իրականությանը:

**Անհրաժեշտ մտահանգում** – մտահանգման տեսակ, որի դեպքում ճշմարիտ նախադրյալներից որոշակի տրամաբանական կանոնների համաձայն բխեցվող եզրակացությունն ունի միանշանակ ճշմարիտ բնույթ: Անհրաժեշտ մտահանգումներ են, օրինակ, դեդուկցիան և լրիվ ինդուկցիան:

**Դեդուկտիվ մտահանգում** – անհրաժեշտ մտահանգման տեսակ, որտեղ միտքն ընթանում է դեպի մասնավոր: Օրինակ՝

Ամեն մի հանցագործություն պետք է պատժվի օրենքով:
Տվյալ արարքը հանցագործություն է:
Հետևաբար, տվյալ արարքը պետք է պատժվի օրենքով:

**Լրիվ ինդուկցիա** – անհրաժեշտ մտահանգման տեսակ, որի դեպքում, ուսումնասիրելով առարկաների տվյալ դասի բոլոր անդամները և բոլորի մոտ հայտնաբերելով (բացառելով) տվյալ հատկությունը՝ եզրակացությունը տարածում են ամբողջ դասի նկատմամբ:

**Ճշմարտանման մտահանգում** – կամ հավանական մտահանգումներ: Մտահանգումների տեսակ, որտեղ ճշմարիտ նախադրյալներից բխեցվող եզրակացությունն ունի առավել կամ պակաս հավանական բնույթ: Այդպիսիք են, օրինակ, ոչ լրիվ ինդուկցիան և համանմանությունը:

**Ոչ լրիվ ինդուկցիա** – հավանական մտահանգման տեսակ, որի դեպքում, ուսումնասիրելով առարկաների դասի մի մասը և չհանդիպելով որևէ դեպքի, որը հակասեր ձևավորվող կարծիքին, եզրակացությունը տարածում են ամբողջ դասի նկատմամբ:

## ԲԱՌԱՐԱՆ

**Հասկացություն** – մտքի ձև, որն արտացոլում է առարկայի կամ առարկաների խմբի այն էական ու ընդհանուր հատկություններն ու հարաբերությունները, որոնք անհրաժեշտ են և բավարար այդ առարկան (կամ առարկաների խումբը) այլ առարկաներից տարբերելու համար:

**Հասկացության բովանդակություն** – հասկացության մեջ ամրագրված հատկությունների ու հարաբերությունների ամբողջություն:

**Հասկացության ծավալ** – առարկաների այն խումբը (դասը), որոնք օժտված են հասկացության բովանդակության մեջ ամրագրված հատկությունների ու հարաբերությունների ամբողջությամբ:

**Բովանդակային տրամաբանություն** – տրամաբանական գիտելիքի ոլորտ, որն ուսումնասիրում է մտքի ձևերը՝ դրանց բովանդակության և ճանաչողական նշանակության դիրքերից:

**Ձևայնացված տրամաբանություն** – տրամաբանական գիտելիքի ոլորտ, որը մտածողության ձևերի ուսումնասիրության նպատակով մաթեմատիկական մեթոդների կիրառման արդյունք է: Ձևայնացումն (Ֆորմալիզացումը, բանաձևերի և արհեստական լեզվի կիրառությունը) այստեղ ունի ոչ թե օժանդակ, այլ հիմնարար նշանակություն:

**Ոչ դասական տրամաբանություն** – տրամաբանական ուսմունքներ ու համակարգեր, որոնք կառուցվում են դասական տրամաբանության հիմքում ընկած *երկարժեքության* (յուրաքանչյուր դրույթ կարող է ընդունել ճշմարտության երկու արժեք՝

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 10 րոպե**

ճշմարիտ կամ սխալ) և *ֆունկցիոնալության* (բարդ դատողության ճշմարտության արժեքը կախված է բաղկացուցիչ պարզ դատողությունների ճշմարտության արժեքներից և դրանք կապող տրամաբանական շաղկապներից) *սկզբունքների* խախտումներով կամ էլ ուսումնասիրում են այնպիսի հարցեր, որոնք դուրս են ավանդական-ձևական տրամաբանության շրջանակներից։ Այդպիսիք են, օրինակ, բազմարժեք, մոդալային, ինտուիցիոնիստական տրամաբանությունները, փոխակերպական տրամաբանությունը և այլն։

## ԲԱՌԱՐԱՆ

**Ավելցուկային փաստարկ** – փաստարկ, որն անհրաժեշտ չէ, քանի որ դրույթն արդեն համոզիչ կերպով ապացուցված է, և դրա առաջադրումը կարող է լրացուցիչ խնդիրներ առաջացնել փաստարկողի համար՝ ձանձրացնել զրուցակիցներին կամ էլ անցանկալի կասկածներ հարուցել դրույթի ճշմարտացիության ու փաստարկողի չափից շատ շահագրգռվածության մասին:

**Պահուստային փաստարկ** – փաստարկ, որը թեև կարելի է ներկայացնել հօգուտ դրույթի հիմնավորման, սակայն տվյալ փուլում դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ դրույթի ճշմարտացիությունն արդեն ապացուցված է: Դա փաստարկողի «զինանոցում» պահվող փաստարկն է, որը կարող է ըստ անհրաժեշտության գործածվել հաղորդակցման հետագա փուլերում:

**Ուղղակի հարց** – հարց, որը նպատակաուղղված է դեպի փնտրելին, բացահայտ կերպով բովանդակում է ցանկալի տեղեկատվություն ստանալու պահանջ:

**Անուղղակի հարց** – հարց, որն անմիջականորեն ուղղված չէ խնդրո առարկային, այլ դրա այս կամ այն հատկությանը, դրսևորմանը, ընկալմանը, երևակայական իրավիճակին, որոնց մասին ստացված տեղեկատվության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացություններ անել խնդրո առարկայի վերաբերյալ:

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 10 րոպե**

## ԲԱՌԱՐԱՆ

**Լեզու** – նշանների համակարգ, որը միջոց է ծառայում մտածողության իրականացման, դրա արդյունքների արտահայտման (առարկայացման) և հաղորդակցման համար:

**Խոսք** – լեզվի կիրառման գործընթացը մտածողության իրականացման (ներքին խոսք), դրա արդյունքների արտահայտման ու հաղորդակցման ընթացքում (արտաքին խոսք):

**Քերականություն** – գիտություն, լեզվաբանության բաժին, որն ուսումնասիրում է բառերի ու նախադասությունների կառուցվածքն ու կապակցման կանոնները:

**Ձևաբանություն** – քերականության բաժին, որն ուսումնասիրում է խոսքի մասերը, բառաձևերը և նախադասություններ կազմելիս դրանց փոփոխությունները:

**Շարահյուսություն** – քերականության բաժին, որն ուսումնասիրում է բառակապակցությունները, նախադասությունները, դրանց կառուցվածքային տեսակներն ու կազմության օրինաչափությունները:

**Խոտան (կամ մոլախոտ) բառեր** – անհարկի և ավելորդ, սակայն սովորույթի ուժով հաճախ կրկնվող բառեր ու արտահայտություններ:

**Ժարգոն** – ֆր. jargon – ոչ ճիշտ, անհասկանալի լեզու, նաև՝ ծածկալեզու: Որոշակի սոցիալական խմբի կամ խավի շրջանակներում կիրառվող բառերի ու դարձվածքների համակարգ, լեզվաոճական ենթամշակույթ, որը գրական լեզվից տարբերվում է իր յուրահատուկ բառապաշարով, դարձվածքներով, բառակազմության առանձնահատուկ եղանակներով, սակայն չունի

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 15 րոպե**

առանձին հնչունական և քերականական համակարգ: Օրինակ՝ ծրագրավորողների, բժիշկների, քրեական կամ երիտասարդական խմբերին հատուկ ժարգոն:

**Ենթամշակույթ** – մշակույթի տիրապետող (հասարակության անդամների մեծամասնությանը հատուկ) ձևից տարբերվող մշակութային միավոր, որը հատուկ է ընդհանուր սոցիալական կարգավիճակ, շահեր, զբաղմունք ունեցող համեմատաբար փոքր խմբերին: Գերիշխող մշակութային համակարգից տարբերվում է սեփական արժեհամակարգով, խրախուսելի ու մերժելի վարքագծերով, լեզվով, որոշ դեպքերում նաև՝ ներկայացուցիչների հագուկապով, արտաքին տեսքով և այլն: Ենթամշակույթի այն ձևը, որը ոչ միայն տարբերվում է մշակույթի գերիշխող համակարգից, այլև ուղղակիորեն հակադրվում ու մերժում է դրա հիմնարար սկզբունքները, կոչվում է հակամշակույթ: Օրինակ՝ քրեական աշխարհի ներկայացուցիչներին հատուկ ենթամշակույթը:

**Լակոնիկ խոսք** – սեղմ, հակիրճ խոսք: Անվանումը ծագում է Հին Հունաստանի Լակոնիա տարածաշրջանի անունից, որտեղ գտնվում է Սպարտա քաղաքը, և որի բնակիչները հայտնի էին իրենց ռազմական ավանդույթներով, զորանոցային ապրելակերպով, նաև հակիրճ ու հատու արտահայտվելու սովորությամբ: Առասպելի համաձայն, երբ Մակեդոնիայի թագավոր Ֆիլիպ 2-րդը մոտեցավ Սպարտայի պարիսպներին, բանագնացների միջոցով սպարտացիներին ուղարկեց առաջարկ-վերջնագիր. «Ես նվաճել եմ ամբողջ Հունաստանը: Իմն է աշխարհի

ամենահզոր բանակը: Հանձնվե՛ք: Այլապես, եթե Սպարտան ուժով գրավեմ, եթե կոտրեմ նրա դարպասներն ու խորտակեմ պարիսպները, ապա անողոք կերպով կսպանեմ բոլորին և քաղաքը հողին կհավասարեցնեմ»: Սպարտացիները կարճ պատասխանեցին վերջնագրին՝ «Եթե ...»:

## ԲԱՌԱՐԱՆ

**Մտապատկեր** – զգայական իմացության ձևերից (զգայություն, ընկալում, մտապատկեր) ամենաբարդը: Երբևէ ընկալված առարկայի զգայական պատկերի վերարտադրությունն է գիտակցության մեջ՝ այդ առարկայի բացակայության պայմաններում: Մտապատկերում տարորոշված չեն առարկայի էական և ոչ էական հատկությունները:

**Հատկություն** – առարկայի (երևույթի) բնութագիծ, որով այն նմանվում է այլ առարկաների կամ տարբերվում դրանցից:

**Էական հատկություն** – առարկայի այն բնութագիծը, որն արտացոլում է դրա ներքին, գոյության օրինաչափությունները, առանց որի այդ առարկան կդադարեր գոյություն ունենալ: Օրինակ՝ մեղադրյալի (այդպիսի կարգավիճակ ունենալու) համար էական է նրան պաշտոնապես մեղադրանք առաջադրելու հանգամանքը:

**Ոչ էական հատկություն** - առարկայի բնութագիծ, որն արտացոլում է դրա արտաքին կողմերն ու հարաբերությունները: Այն կարող է ինչպես բնորոշ լինել, այնպես էլ բնորոշ չլինել տվյալ առարկային: Դրանից վերջինիս որակական ամբողջականությունը էական փոփոխություններ չի կրում: Օրինակ՝ դատավոր հասկացության համար ոչ էական են ազգություն, տարիք և այլ հատկությունները:

**Իրոնիա** – հեգնանք: Միջանկյալ դիրք է գրավում հումորի (զրուցակցի կամ զավեշտ հանդիսացող երևույթի նկատմամբ մեղմ, հանդուրժող, բարյացակամ, հարգալից վերաբերմունք բովանդակող կատակ) և

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 10 րոպե**

ծաղրի (զրուցակցի կամ զավեշտ հանդիսացող երևույթի նկատմամբ անհանդուրժող, անխնա մերժողական, անհարգալից վերաբերմունք բովանդակող քննադատություն) միջև: Սքողված ծաղր, որն արտահայտվում է ոչ թե ուղղակի, այլ ենթատեքստի, ակնարկի միջոցով:

## ԲԱՌԱՐԱՆ

**Բումերանգ** կամ **հակադարձ հարված** – փաստարկման, ելույթի, բանավեճի ընթացքում կիրառվող հնար, որի դեպքում ընդդիմախոսի դրույթը, փաստարկը, անգամ ռեպլիկը շուռ է տրվում և գործածվում նրա դեմ:

**Հիպերբոլա** կամ **չափազանցում** – պերճախոսական հնար, որի դեպքում բնութագրվող երևույթի որոշ հատկություններ ներկայացվում են չափազանցված, ուռճացված՝ ընդգծելու նպատակով (օր.՝ *«մեռանք սովորելով», «հազար անգամ է ասվել»*):

**Մեյոզիս** կամ **նվազեցում, նվազաբանություն** – պերճախոսական հնար, որի դեպքում բնութագրվող երևույթի որոշ հատկություններ գիտակցաբար նվազեցվում են՝ երևույթի թեթևությունը, փոքրությունը, խնդրի հեշտությունն ընդգծելու նպատակով (օր.՝ «մի բուռ հայրենիք», «մի մատ երեխա», «իրավաբան դառնալը բարդ գործ չէ: Պարզապես հարկավոր է մի երկու օրենսգիրք իմանալ»):

**Հումոր** – զրուցակցի կամ զավեշտ հանդիսացող երևույթի նկատմամբ մեղմ, հանդուրժող, բարյացակամ, հարգալից վերաբերմունք բովանդակող կատակ:

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 10 րոպե**

## ԲԱՌԱՐԱՆ

**Թույլատրելի հնարքներ** – հաղորդակցման ընթացքում գործածվող միջոցներ, յուրօրինակ «խորամանկություններ», որոնք հեշտացնում են փաստարկողի գործը և այն դժվարացնում ընդդիմախոսի համար՝ այդուհանդերձ չխախտելով հաղորդակցման արդյունավետությունը երաշխավորող սկզբունքները:

**Ձգձգված պատասխան** – հնարք, որը կիրառում են մասնավորապես այն դեպքերում, երբ փաստարկողի մտածողությունն արգելակվել է, կամ լրացուցիչ ժամանակ է հարկավոր ընդդիմախոսի փաստարկները ծանրութեթև անելու համար: Նպատակը մտքերը հավաքելու համար աննկատ ժամանակ շահելն է: Դա կարող է արվել առաջադրված փաստարկի կապակցությամբ լրացուցիչ հարցեր տալով, տվյալ հարցին միջնորդավորված կերպով առնչվող որևէ խնդրի դիտարկմամբ և այլն:

**Նախօրոք պատասխան** – հնարք, որի միջոցով ելույթ ունեցողը կարողանում է կանխել իրեն ուղղվելիք քննադատությունը կամ անցանկալի հարցերը: Չսպասելով ընդդիմախոսի առարկություններին՝ նա ինքն է նախօրոք ներկայացնում հնարավոր դիտողություններն ու առարկությունները և վերլուծելով մերժում դրանք:

**Ձգուշավոր ճշգրտում** – հնարք, երբ վրիպակ թույլ տված կողմը տարբեր պատճառներով չցանկանալով բացահայտորեն ընդունել տեղ գտած թերությունը, կրկին անդրադառնալով իր նախորդ մտքին, հընթացս շտկում է տեղ գտած վրիպակը: Օրինակ՝

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 20 րոպե**

*«Ես ցանկանում եմ կրկին անդրադառնալ իմ նախորդ մտքին և մի փոքր ավելի հանգամանալից վերաշարադրեմ ու մեկնաբանեմ այն, որպեսզի թյուրըմբռնումներ չլինեն...»:*

**Հակասող դրույթի առաջադրման հնարք** – կիրառվում է փաստարկողի դրույթներն առանց տարբերակման ժխտող ընդդիմախոսի հետ բանավեճի ընթացքում: Անհրաժեշտ դրույթի փոխարեն առաջարկում են դրան հակասող դրույթը, որը ժխտելուց հետո ընդդիմախոսը կանգնում է սկզբնական դրույթի ընդունման փաստի առաջ:

**Մարգինալ իրավիճակ** - (լատ. margo՝ - եզր, սահման) սահմանային, ծայրահեղ իրավիճակ:

## ԲԱՌԱՐԱՆ

**Դատողության սուբյեկտ** – հասկացություն մտքի առարկայի մասին, որին վերագրվում է որևէ հատկություն կամ հարաբերություն հաստատման կամ ժխտման միջոցով:

**Դատողության պրեդիկատ** – հասկացություն այն հատկության կամ հարաբերության մասին, որ հաստատվում կամ ժխտվում է մտքի առարկայի նկատմամբ:

**Դատողության քանակ** – դատողության բնութագիր, որը ցույց է տալիս, թե դատողության պրեդիկատը սուբյեկտի ծավալի որ մասին է վերաբերում: Ըստ քանակի՝ դատողությունները լինում են *ընդհանուր, մասնավոր* և *եզակի:* Ընդհանուր դատողության սուբյեկտն ընդհանուր հասկացություն է, իսկ պրեդիկատը վերաբերում է սուբյեկտի ողջ ծավալին («Բոլոր դատախազներն ունեն իրավաբանական կրթություն»): Մասնավոր դատողության սուբյեկտն ընդհանուր հասկացություն է, իսկ պրեդիկատը վերաբերում է սուբյեկտի ծավալի մի մասին («Որոշ դատախազներ ունեն գիտական աստիճաններ»): Եզակի դատողության սուբյեկտը եզակի հասկացություն է, իսկ պրեդիկատը, բնականաբար, վերաբերում է սուբյեկտի ամբողջ ծավալին («Հայաստանի երրորդ հանրապետությունը ժողովրդավարական պետություն է»):

**Դատողության որակ** – դատողության բնութագիր, որը ցույց է տալիս մտքի առարկայի (դատողության սուբյեկտի) նկատմամբ հատկության (դատողության պրեդիկատի) հաստատման կամ ժխտման իրողությունը: Ըստ այդմ դատողությունները

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 20 րոպե**

լինում են հաստատական («Դատարանը պետական իշխանության մարմին է») կամ ժխտական («Դատարանը ոչ կառավարական կազմակերպություն չէ»):

**Դատողության մոդալականություն** – դատողության բնութագիր, որը ցույց է տալիս դատողության տերմինների (սուբյեկտի և պրեդիկատի) միջև կապի բնույթը, երևույթների գոյության ձևը, դատողության իմացաբանական (ապացուցելի, հերքելի, անստուգելի), արժեքային (լավ է, վատ է, արժեքային տեսանկյունից միևնույն է) կարգավիճակը: Ավանդական-ձևական տրամաբանության մեջ դատողություններն ըստ մոդալականության բաժանվում են երեք խմբի. հնարավորության, իրականության և անհրաժեշտության:

**Ապատեղեկատվություն** – զրուցակցին, ընդդիմախոսին կամ հանրությանը մոլորեցնելու նպատակով շրջանառության մեջ դրված հաղորդագրություն, տեղեկատվություն, որը պարունակում է կանխահայտ սխալ (կեղծ), աղավաղված տվյալներ:

**Թեզիսի նենգափոխում** – անթույլատրելի հնարք, որի դեպքում տվյալ դրույթի փոխարեն ապացուցվում կամ հերքվում է դրան նման կամ ըստ էության տարբեր մեկ այլ դրույթ, և դա ներկայացվում է որպես սկզբնական դրույթի հերքում կամ ապացուցում:

## ԲԱՌԱՐԱՆ

**Ձայնի դիապազոն** – ձայնի նվազագույն և առավելագույն հնչեղության միջակայք:

**Խոսքի տեմպ** – խոսքի որակ, որը ներառում է. ա) արագությունը՝ միավոր ժամանակահատվածում (օրինակ՝ մեկ րոպեում) արտասանված բառերի քանակը, բ) առանձին բառերն արտասանելու տևողությունը, գ) դադարները և դրանց տևողությունը:

**Մոդիֆիկացնող ժեստեր** – լատ. modus – չափ, եղանակ և facio – անել բառերից: Մարմնի շարժումների ձևեր, որոնք ուժեղացնում են արտասանած բառերի հուզական ներգործությունը:

**Միմիկա (դիմախաղ)** – դեմքի մկանների շարժումն է և աչքերի արտահայտությունը, որոնց միջոցով զրուցակցին ու լսարանին են փոխանցվում ելույթ ունեցողի տրամադրությունը, վերաբերմունքը խոսքի առարկայի նկատմամբ:

**Հիշողություն** – սուբյեկտի՝ տեղեկատվություն մտապահելու, այդ կերպ կենսափորձ կուտակելու, անհրաժեշտության դեպքում այդ տեղեկատվությունը վերարտադրելու և օգտագործելու ընդունակություն:

**Մնեմոնիկա** – հուն.՝ հիշելու, մտապահելու արվեստ: Մնեմոնիկ կոնսպեկտ – ելույթի գլխավոր դրույթները, հանգուցային գաղափարները պարունակող սեղմագիր, հուշագիր:

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 10 րոպե**